ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 26 » հունիսի 2026 թվականի N:236-Ա ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՎՈՂ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշմամբ հաստատված «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահութաբաժինների վճարման գործընթացում պետական բաժնեմասի կառավարման լիազորություններն իրականացնող մարմինների աշխատանքի կազմակերպման կարգի» 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշմամբ հաստատված «Կանոնադրական կապիտալում պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման և պետության բաժնեմասից ստացվող շահութաբաժինների հաշվարկման և վճարման կարգի» 31-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալի 2026 թվականի հունիսի 18-ի 02/3-3/16297-2026 գրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կառավարմանը վերապահված պետական բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2025 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե վճարվող շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի

2026 թվականի հունիսի 26 N 236-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՎՈՂ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ

Հ/Հ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կառավարմանը վերապահված կազմակերպության անվանումը	Շահութաբաժնի հաշվարկման բազան (ՀՀ դրամ)	Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարն՝ ըստ կանոնադրական կապիտալում պետության բաժնեմասի (ՀՀ դրամ)
1	«Ամասիայի առողջության կենտրոն» ՓԲԸ	95,700.00	47,850.00
2	«Արթիկի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» ՓԲԸ	195,400.00	97,700.00
3	«Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ	326,440.00	163,220.00
4	«Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ	626,800.00	313,400.00
5	«Գյումրու Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան	27,700.00	13,850.00

	պոլիկլինիկա»ՓԲԸ		
6	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Վ. Աբաջյանի անվան Ընտանեկան բժշկության կենտրոն» ՓԲԸ	134,000.00	67,000.00
7	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ	501,000.00	250,500.00
	ԸՆԴԱՄԵՆԸ	1,907,040.00	953,520.00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է